ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2023_2024 ՈՒՍՏԱՐԻ

ԴՊՐՈՑ Աբովյանի Ս. Անտոնյանի անվան թիվ **8 հիմնդպրոց**

ԴԱՍԱՐԱՆ 2-րդ 《Ա》

ԴԱՍՂԵԿ Անուշ Հովհաննիսյան

| ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԺԱՄԿԵՏ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|---|
| **Կազմակերպական աշխատանք**<br>• Շնորհավոր Սեպտեմբերի 1՝ Գիտելիքի օր<br>Դասասենյակի ձևավորում, դասագրքերի բաշխում<br>• Ծանոթացնել դպրոցում գործող անվտանգության միջոցների ու պայմանների հետ<br>• Ծանոթացնել դպրոցի կարգուկանոնին<br>• Բացահայտել ռիսկի խմբերը<br>• Դասարանի ծնողական խորհրդի ընտրություններ<br>• Դասը վարում է բարձր դասարանցին: Փորձի փոխանակում և հետադարձ կապի ստեղծում ավագ և կրտսեր դպրոցականների միջև | Սեպտեմբեր<br><br>Ուստարվա ընթացքում | Դասղեկ<br><br>Դասղեկ, ծնողներ<br><br>Դասղեկ, սովորողներ |
| **Աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն**<br>*Խնդիրները՝*<br>*Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: Այդ խնդիրների լուծմանը կնպաստեն քննարկվող թեմաները, որոնք առնչվում են առողջ ապրելակերպին:*<br>• Ի՞նչ է առողջ ապրելակերպը, ինչու՞ է այն կարևոր:<br>• Աշխատանքը ոչ միայն գեղեցկացնում է մարդուն, այլ նաև՝ կոփում, համբերատար ու տոկուն դարձնում: Զրույց աշխատանքի կարևորության մասին: Բացատրել, որ մեր շուրջը գտնվող ամեն բան աշխատանքի արդյունք է: Աշխատանքի մշակույթ ձևավորել՝ նախապես նախապատրաստել աշխատանքային գործիքները, սեղանը, իսկ աշխատանքն ավարտելուց հետո հավաքել և կոկիկ պահել աշխատասենյակը: | Դեկտեմբեր<br><br>Մայիս | Դասղեկ<br><br>Դասղեկ |

| | | |
|---|---|---|
| **Ռազմահայրենասիրական և հոգևոր դաստիարակություն**<br>*Խնդիրները՝*<br>*Սովորողների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք հայ ազատամարտիկների նկատմամբ:*<br>*Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:*<br>*Սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:* | | |
| • Զրույց - քննարկում՝ «Ես անկախ պետության քաղաքացի եմ» Զրույց պետական խորհրդանիշների մասին | Սեպտեմբեր | Դասղեկ |
| • Դաս- միջոցառում՝ <<Երևան՝ իմ տուն>> | Հոկտեմբեր | Դասղեկ |
| • ՀՀ բանակի օր: Զրուցել բանակի ստեղծման մասին, բացատրել դրա կարևորությունն ու կենսական նշանակությունը: Պատմել ազգային հերոսների մասին : | Հունվար | Դասղեկ<br>Զինղեկ |
| • Տեառնընդառաջ կամ Տերնդեզ: Պատմել եկեղեցական այս տոնի ծագման, նշանակության մասին: | Փետրվար | Դասղեկ |
| • Սուրբ Հարության տոն: Պատմել Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության մասին, բացատրել, թե ինչու են այդ օրը ձու ներկում, չամչով փլավ և այլ ավանդական ճաշատեսակներ պատրաստում: Զրուցել նաև Զատկական խաղերի մասին, խաղալ դասարանում: | Ապրիլ | Դասղեկ |
| • Մայիսյան հաղթանակներ: Զրուցել մայիսյան հաղթանակների մասին, դրանք կերտած մեր քաջորդիների, հերոսների մասին: | Մայիս | Դասղեկ<br>Զինղեկ |
| • Առաջին Հանրապետության օր: Զրույց Սարդարապատի հերոսամարտի մասին | Մայիս | Դասղեկ |

| | | |
|---|---|---|
| **Բարոյական և գեղագիտական դաստիարակություն**<br>*Խնդիրները՝*<br><br>*Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:* | | |
| • Թարգմանչաց տոն<br>• Երևանի ծննդյան օրվա առիթով երեխաների նկարած նկարների ցուցահանդես<br>• Դասարանի ամանորյա ձևավորում<br>• Ամանորյա տոնակատարություն<br>• Երեխաների ձեռքով ամանորյա խաղալիքների, բացիկների, նվերների պատրաստում<br>• Օգնություն անապահով երեխաներին<br>• Գրադարանից օգտվելու կանոնները<br>• Գիրք նվիրելու օրը և Հ.Թումանյանի ծննդյան օրը: Կազմակերպել ցերեկույթ՝ նվիրված Հ.Թումանյանի կյանքին ու գործունեությանը, այն ամփոփել միմյանց գիրք նվիրելով:<br>• Կանանց միջազգաին օր: Զրույց կանանց միջազգային օրվա ծագման մասին: Սովորողները կպատրաստեն բացիկներ, ծաղկեփնջեր և կնվիրեն ծնողներին, իսկ տղաները՝ նաև դասարանի աղջիկներին:<br>• Գարունն իմ աչքերով: Սովորողները պաստառ կպատրաստեն, որտեղ կարտացոլվի բնության զարթոնքը, ինչպես նաև կերպարվեստի ու տեխնոլոգիայի ինտեգրված դաս կկազմակերպվի, որի ընթացքում սովորողները կներկայացնեն գարնան թեմայով իրենց ձեռքի աշխատանքները | Հոկտեմբեր<br>Հոկտեմբեր<br><br>Դեկտեմբեր<br><br>Փետրվար<br>Փետրվար<br><br>Մարտ<br><br>Մարտ | Դասղեկ<br>Դասղեկ, սովորողներ<br><br>Դասղեկ, սովորողներ<br><br>Դասղեկ, գրադարանավար<br>Դասղեկ, ծնողներ, սովորողներ<br><br>Դասղեկ<br><br>Դասղեկ<br><br>Դասղեկ, կերպարվեստի ուսուցչուհի,տեխնոլոգիայի ուսուցչուհի, սովորողներ |

| | | |
|---|---|---|
| **Գիտաճանաչողական դաստիարակություն**<br>*Խնդիրները՝*<br>*Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում :*<br>*Պատմամշակությային արժեքների գնահատում, արժևորում:*<br>*Նշանավոր մարդկանց օրինակով արժեհամակարգի ձևավորում:*<br>*էքսկուրսիաներ, արշավներ* | | |
| • Մենք և մեր չորքոտանի բարեկամները: Սեր և հոգատար վերաբերմունք ձևավորել կենդանիների հանդեպ, բացատրել, որ նրանք բնության մի մասն են կազմում: Անդրադառնալ նաև Կարմիր գրքում գտնվող կենդանիներին:<br>• Էքսկուրսի դեպի տառերի պուրակ և Օշական: Սովորողները կլինեն տառերի պուրակում, կայցելեն Օշականում գտնվող Սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզման, ծաղիկներ կխոնարհեն: | Դեկտեմբեր<br><br>Մայիս | Դասղեկ<br><br>Դասղեկ, ծնողներ, սովորողներ |
| **Իրավական - քաղաքացիական դաստիարակություն**<br>*Խնդիրները՝*<br>*Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում: Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում:*<br>• Ու՞մ անունն է կրում իմ դպրոցը Զրույց՝ նվիրված Ռ.Միրոյանի կյանքին ու գործունեությանը<br>• Հանդուրժողականություն Զրույց այն մասին, թե ինչ է հանդուրժողականությունը, միաժամանակ բացատրել, որ ամեն ինչ | Հոկտեմբեր<br><br>Նոյեմբեր | Դասղեկ<br><br>Դասղեկ |

| | | |
|---|---|---|
| չէ, որ պետք է հանդուրժել: Քննարկել օրինակներով | | |
| • Դաս- բանավեճ «Իրավունք և պարտականություն» Զրույց «Իմ իրավունքներն ու պարտականությունները» թեմայի շուրջ | Նոյեմբեր | Դասղեկ |
| • Թրաֆիքինգ: Յուրաքանչյուր անձ ունի սեփական անձի, մարմնի, անձնական տարածքի, հեռավորության անձեռնմխելիություն: Պետք է կարողանալ ասել «ոչ»: | Նոյեմբեր | Դասղեկ |
| • ՃԵԿ: Անվտանգ երթևեկություն: Բացատրել երթևեկության կանոնները, նշանները, խոսել դրանց պահպանման և կիրառման կարևորության մասին | Նոյեմբեր | Դասղեկ |
| • Հիշատակի օր: Հիշել աղետներից պաշտպանվելու կանոնները | Դեկտեմբեր | Դասղեկ |
| • Հաշմանդամների միջազգային օր: Զրույց կյանքը բոլորի համար հավասար դարձնելու անհրաժեշտության մասին | Դեկտեմբեր | Դասղեկ |
| • Կարողանու՞մ եմ, արդյոք, ընկերություն անել | | Դասղեկ |
| • Մեր վարքագիծը արտակարգ իրավիճակներում՝ տանը, դպրոցում, փողոցում | Փետրվար | Դասղեկ |
| • Ազգային փոքրամասնություններ: Զրույց մեր երկրում ապրող ազգային փոքրամասնություն կազմող մարդկանց մասին: Բացատրել, որ աշխարհի բոլոր երկրներում էլ կան ազգային փոքրամասնություններ: Պետք է նրանց նկատմամբ դրսևորել հարգանք, հանդուրժողականություն: | Մարտ<br>Ապրիլ | Դասղեկ, զինղեկ |
| • Ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Բացատրել Ցեղասպանության հուշահամալիրի խորհուրդն ու նշանակությունը: | Ապրիլ | Դասղեկ |

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

## Դասղեկի ժամի թեմաները

| Ժամկետ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|
| 1. | «Գիտելիքի օր» | Դասվար | |
| 2. | «Ես աշակերտ եմ» | Դասվար | |
| 3. | «ՀՀ-ն 32 տարեկան է» | Դասվար,զինղեկ | |
| 4. | «Իմ իրավունքներն ու պարտականությունները» | Դասվար | |
| 5. | «Թարգմանչաց տոն» | Դասվար | |
| 6. | «Երևան՝ իմ տուն» | Դասվար | |
| 7. | «Ու՞մ անունն է կրում իմ դպրոցը» | Դասվար | |
| 8. | «Հանդուրժողականություն» | Դասվար | |
| 9. | «Թրաֆիքինգ» | Դասվար | |
| 10. | ՃԵԿ | Դասվար | |
| 11. | «Ինչպես պաշտպանվել աղետներից» | Դասվար | |
| 12. | «Հաշմանդամության միջազգային օր» | Դասվար | |
| 13. | «Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ» | Դասվար | |
| 14. | «ՀՀ բանակի օր» | Դասվար, զինղեկ | |
| 15. | «Կարողանու՞մ եմ արդյոք ընկերություն անել» | Դասվար | |
| 16. | «Գրադարանից օգտվելու կանոնները» | Դասվար, գրադարանավար | |

| | | | |
|---|---|---|---|
| 17. | «Գիրք նվիրելու օրը և Հ.Թումանյանի ծննդյան օրը» | Դասվար | |
| 18. | «Մեր վարքագիծը արտակարգ իրավիճակներում՝ տանը, դպրոցում, փողոցում» | Դասվար | |
| 19. | «Կանանց միջազգային օր» | Դասվար | |
| 20. | «Գարունն իմ աչքերով» | Դասվար,ծնողներ, սովորողներ | |
| 21. | «Մենք և մեր չորքոտանի բարեկամները» | Դասվար | |
| 22. | «Մայրության և գեղեցկության օր» | Դասվար | |
| 23. | «Սուրբ Հարության տոն» | Դասվար | |
| 24. | «Ինչո՞վ ենք նման, ինչո՞վ ենք տարբեր» | Դասվար | |
| 25. | «Ազգային փոքրամասնություններ» | Դասվար | |
| 26. | «Ցեղասպանության տարելից» | Դասվար | |
| 27. | «Մայիսյան հաղթանակներ» | Դասվար, զինղեկ | |
| 28. | «Ընտանիքի միջազգային օր» | Դասվար | |
| 29. | «Առաջին Հանրապետության օր» | Դասվար | |
| 30.<br>31.<br>32.. | «Ինչպես արդյունավետ անցկացնել արձակուրդը»<br>Տարեվերջյան էքսկուրսիա<br>Ամառային արձակուրդների հանձբարարություն | Դասվար<br>Դասվար<br>Դասվար | |